

Ամբաս Բիւրաս  
Խմբագրութիւն «Փիիւնիկ», Ի  
Աղեքսանդրիա



S. Burat  
Rédaction «PUNIG»  
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՅՍԱՆ

Ղր. 45  
ՏԱՐԵԿԱՆ... 45  
ՎԵՑԱՄՍԵԱՑ 25

Ձր. 25  
ՏԱՐԵԿԱՆ... 25  
ՎԵՑԱՄՍԵԱՑ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆՆԻԿ Է  
Ձեռագիր եւ չ'դարձուի

ԿՈՎԿԱՍ  
ՏՅՐԵԿԱՆ ԲՊԼ. 6  
Ազդեր կ'ընդունուին մասնաւոր պայմաններով.

# Փիիւնիկ

Կը ծախուի ՄԷԿ զրուս սղջի

ՇԱՐԱՐԱՐԵՐԹ

## ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1902

ԹԻԻ 12

### Փիիւնիկ, Ը

Նախորդ շաբթուան մէջ չըհրատարակուեցաւ, որովհետեւ Տնօրէն-Խմբագիրը դարմանել կուտայ իր աչացաւը, որմէ կը տառապէր ատենէ մ'ի վեր: Սակայն Պատ. Բաժանորդները պիտի անպակաս ստանան իրենց տարեկան 52 թիւերը:

### ԷԱՄԱԺԱՐԱԿԸ

Ե Ի

### ՀՍԵԿ. ՀԻՒԱՆԴԱՆՈՅԸ

Քաղաքիս հրապարակին վրայ չը- շուկ մ'է կը չըլի բերնէ բերան. Գո- շերայե՛ն ի՛նչ շուր: Ձերձ Աղեքսան- զրիան ալ վարակուեցաւ. արդէն մէկ երկու շաբաթ կայ, համաճարակը կա- նոնաւոր կերպով կը գործէ, թաղե- րուն մէջ խտիր չը դնելով: Խամիէ,

— մենաշնորհաւորուն հանգստաւէտ բնակավայրը—, կ'իմանանք թէ յաճախ կը պատահին դէպքեր, նոյնիսկ դիւ- րակեցիկ եւրոպացիներու վրայ: Ըսել է թէ կատակ չէ՛, լըջօրէն պէտք է ընդունիլ որ համաճարակը համաճա- րակ է, վտանգը դուռերնիս ափ ա- ուեր է:

Սակայն ի՛նչ կայ վախնալու. ար- դէն առածի կարգ անցած է թէ՛ գօ- լերային զոհերուն թիւը շատ քիչ է բռնուելու վախէն մեռնողներուն թիւէն:

Վախնալը գէշ է, բայց աւելի գէշ է չըզգուշանալը: Քաղաքակիրթ կեդ- րոնները գոնէ կը վայելեն շատ թուով ճարտար բժիշկներու ներկայութեան առաւելութիւնը. քաղաքնիս այդ կար- գի կարևոր կեդրոններէն մինէ ու մէնք կրնանք պարծենալ մեր 5-6 բժիշկ- ներով, որոնք մեր հասարակութեան հաւար կը բաւեն: Ինքզինքնիս քիչ մը ամուր բռնենք ու զգոյշ, առանց փո- խելու մեր ստամոքսին ռէժիմը, ջա- նանք աւելի դիւրամարս կերակուրնե- րով ապրիլ, ժամանակ մը զրկե՛նք մեր ախորժակը համեղ ու փորձիչ

պտուղներէն, նկատելով զանոնք իբրև աշգիլուած պտուղ, «ոյր քունս... քեր ճաշակացրն ջաւք եւնոյժ յաշխարհ ըզնան»: Փորձ բժիշկներէն յաճախ իմացած ենք թէ՛ Գօլէրան կանխաւ կ'ազգարարէ իր գալուստը. սիրտը խառնուիլ, գլուխը պտըտիլ, փրսխելու հակում մը, ահա՛ կարապետող շարագուշակ նշանները:

Այդ առաջին փուլին մէջ իսկ պէտք է շանալ առաջին առնուլ աղէտին: Բոլոր դեղարանները կը գտնուին հակագօշտրական դեղերը, քանի մը զբուշով կարելի է ձեռք բերել:

Բայց հակառակ ամեն պաշտպանողական միջոցներու, եթէ բռնուի՞նք, ի՞նչ ընել պէտք է:

Հոս է խնդիրը:

Թաղապետական սե կառքը դուռը, դատապարտուածը յաւիտենական Սիպերիան փոխադրելու կազմ ու պատրաստ, իր այդ չոր տեսքովը Գօլէրային չափ պաղ ու անկէ աւելի պակուցիչ բան մըն է որ մարդուն երակներէն ներս կը հոսի, կը սողայ, կը թռնաւորէ արիւնը, գետին կը զարնէ մարդը, ու... վերջը: Արմաւենեաց օթեւանը, եթէ թաղապետութիւնը հաճի արտօնել անոր հանդիսաւոր թաղումը, և եթէ կրէ աւազանին մէջ անոր վերջին օժոււրը կատարել չը տայ Քեչքան գերեզմանափորներուն:

Սե կառքը... Գօլէրայէն ալ սե: Աւելցրնենք ասոր վրայ այն հիւանդագին համոզումն ալ թէ՛ կառքին փոխադրածը ալ չը դառնար, թէ՛ բախուողը կը տանին կը նետեն երեսի վրայ, ոմանք ալ ճամբան, կառքին մէջ կը վերջացրնեն. ևն, այն ատեն կ'ունենանք ազօտ գաղափար մը ուամիկ ու նաև զարգացած դասակարգերուն հնգեկան վիճակին վրայ:

Ուրեմն հայերուս առջև կը բացուի նոր ուղի մը, մեր, ափ մը մար-

դոց, գոյութիւնը փրկելու ճամբայ մը. հիւանդանոց մը, ազգային հիւանդանոց մը, ուր վստահօրէն ու հաւատքով զրկենք մեր վարակուածները: Եւ ի՞նչ կայ աւելի կենսական ու աւելի իրագործելի բան մը քան հայկ. հիւանդանոցի մը հիմնարկութիւնը քաղաքիս մէջ, ուր Վսեմաշուք Աբրահամ Պէյ Բարթողի նման անզուգական բարերար մ'ունենալով երջանիկ կը համարինք ի՛ր քղինքնիս:

Փութանք ուրախութեամբ աւելտել մեր Պատ. Ընթերցողներուն թէ՛ նորին Վսեմութիւնը, քրիստոնէական որքան սղգասիրական բարձր ու վեհ զգացումներէ մղուած, մտադիր է մօտերս հիմնել իր նախաձեռնութեամբը քաղաքիս մէջ, առաջին Ազգային Հիւանդանոցը, դեռ նոր աւարտած նորոգումները, բարեգարգութիւնն ու կահաւորումները Ս. Տաճարին, Վարժարանին ու Առաջնորդարանին:

Տեղիս հառարակութիւնը գոհ, զուարթ ու մանաւանդ հպարտ կը զգայինք քղինք, իր մէջ կրելով Աբրահամ Պէյի նման վեհանձն ու ցեղին նախանձովը յուզուող անդամ մը, որ իր մով գիտէ բարձրացրնել սղգային ինքնասիրութիւնը՝ հանդէպ օտարներուն:

Հոս այսպէս. իսկ հոն, ծովէն անդին, սարսափներու երկրին մայրաքաղաքը Կ. Պոլիս, Տիկին Երանուհի Ա. Բարթող Պէյ, դշխոյալայել առատաձեռնութեամբ մը զանազան նպաստներ կը բաշխէ ազգային բարենպաստակ հաստատութեանց — վարժարան, հիւանդանոց, որբանոց, ևն — Պոլսական բոլոր թերթերը ղմայլանքով ու հիացումով կը խօսին սոյն հոգեղէն Հրեշտակին վրայ, որ վերջերս ալ Ն. Բ. Խտիվուհիէն հրաւիրուած, միասին մէկ կառքի մէջ բազմած ժամերով հետը պտոյտ ըրած և խիստ արժանապէս պատուասիրուած է նորին Շնոր-

հալի Բարձրութենէն: Այս ամենը լաւ,  
նշանակե՛նք հպարտութեամբ:

Վսեմ. Աբրահամ Պէյ Բարթող ու  
ն. Վ. Տիկինը քաղաքիս հայ հասա-  
րակութեան իւրաքանչիւր անդամի սըր-  
տին մէջ մասնաւոր տեղ մ'ունին, տեղ  
մը որ յատուկ է միայն ճշմարիտ բա-  
րերարներու: Իսկ եթէ, ինչպէս որ ի-  
մացանք, մօտերս իրազործուի նաև  
Հայկ. Հիւանդանոցին բացմամբ, օ,  
այն ատեն, տեսնել պէտք է պոռթ-  
կումը խնդամով ամբոխին անկեղծ ե-  
րախտագիտութեանը:

Հիւանդանոցը պէ՛տք է հիմնել,  
ու հիմնել՝ շուտով, անյապաղ, ազ-  
գային, ընտանի յարկի մը միջոցա-  
րէն մէջ դարմանելու համար մեր  
համարիւն ու համակրօն վարակուած-  
ները:

Հրէաներն անգամ ունին իրենց  
ազգային հիւանդանոցը, թողունք յոյ-  
ներունը, գերմանացիներունը, ֆրան-  
սացիներունը, իտալացիներունն ու անգ-  
լիացիներունը, են, են: Ինչո՞ւ չ'ու-  
նենանք մենք ալ մերինը: Եւ ունինք  
ալ:

Եկեղեցիին շրջափակին մէջ, բան-  
ջարանոցներուն ու արմաւենեաց միջև  
կանգնած է պատրաստ շէնք մը, ուր  
կը բնակին Փռնուղի Հերոսը Գեր. Հ.  
Բարթող. Թագածեան, Արժ. Քահա-  
նայ հայրերը: Ապուշ բան է առար-  
կել թէ հիւանդանոցը լաւ չէ՛ որ զըտ-  
նուի եկեղեցիին քով: Ագոր հնարը  
կայ, եկեղեցիէն հոն տանող ճամբուն  
դուռը փակել կը տրուի, կառուցուող  
նոր անճոռնի ճէ յարկենի շէնքին քո-  
վէն ճամբայ մը կը բացուի, եթէ ար-  
դէն չը կայ: Մէկ շաբթուան մէջ կա-  
րելի է կահաւորել Հիւանդանոցը, մահ-  
ճակաշներովն ու բոլոր սարքովը:

Բժիշկներն արդէն պատրաստ են.  
Ա. Գն. Տեարք Տեարք Տօգդ. Տօգդ. Էն-  
ֆիէճեան, Ժամկոչեան, Թէօֆիլ, Եզե-  
կիէլեան, Չորլեան, Լուսարարեան, են.

կրնան շաբթուան մէջ դռնէ մէկ եր-  
կու օր, օրը մէկ անգամ այցելել մեր  
նոր Հիւանդանոցը: Առ այժմ, համա-  
ճարակին արգելքովը Ազգ. երկ. վար-  
ժարանը փակ կը մնայ, պաշտօնեա-  
ներն արդէն հեռացուցուած են, Ազգ.  
Մտուկը ու է կապ չունի անոնց հետ.  
Ի՞նչ կըլլայ, մէկ երկու ամիս ալ մեր  
վարժարանին պատկառելի պիւտճէովը  
թող մեր հիւանդները դարմանուին:  
Ամեն բան իր ատենին. քիչ մը կամք,  
քիչ մը ջանք, ու յետո՞յ: Ն. Վ. Աբ-  
րահամ Պէյ Բարթողի մէկ բառը, ու  
կ'ըլլայ:

Կը պատմուի թէ Պօլսոյ Մեծ Գօ-  
լէրան իր աւերները չը դադարեցուց  
մինչև որ Մեծ Հրդեհը վրայ չը հա-  
սաւ. փորձուած է մէկէ աւելի քա-  
ղաքներու մէջ որ համաճարակը կը  
ջնջուի հրդեհով: Օգտակար չէ՞ ու-  
րեմն եկեղեցիին շրջափակին ու բաց-  
ուելիք հիւանդանոցին բոլորտիքը վա-  
ռել չոր խուփներ, յարդ, թուղթ, եւ  
ուրիշ դիւրալոյց վառելանիւթեր, մու-  
խով յաճախ պաշարել տեղին միջո-  
ւորտը:

Վերադառնալով նիւթին, կըրկ-  
նենք, առանց չափազանցած ըլլալու, թէ  
Համաճարակը դուռերնիս հասաւ, եւ  
թէ՛ անհրաժեշտ է Հայկ. Հիւանդա-  
նոցի մը բացումը, ու վերջացնենք  
յօդուածնիս հետեւեալ բերկրաւիթ  
լուրով:

Շուշեցի ճալկարօ՛ք Եղբարք  
(Յովհաննէս, Իսահակ. Աթանաս և Նի-  
կողոս), ծանօթ սեղանաւորներ ի Մօս-  
կուա, մէկէ աւելի անգամներ իրենց  
առատ սձեռնութեան ապացոյցները  
տուած են զանազան ազգային բարե-  
գործութիւններով: Մարաշի մէջ ի-  
րենց անունով Որբանոց մը կը պահեն  
տարեկան 10000 ֆրանգով: Իսկ վեր-  
ջերս, երէց եղբայրը Պ. Յովհաննէս  
ճամկարօֆ, ընդարձակ տուն մը պար-

գեւած է Շուշիի, հիւանդանոցի վերածուելու համար:

Շէնքէն զատ, պարգեւած է նաև այդ հիւանդանոցը մշտապէս կանգուն պահելու հարկաւոր դրամագլուխը: Այս պարգևը կ'արժէ 600000 ֆրանգ: Ճամկարօֆ հիւանդանոցին բացուած տեղի ունեցեր է Օգոստոս 15ին: Ազնիւ բարերարին փափագին համեմատ, ամեն ցեղէ ու կրօնքէ հիւանդներ պիտի ընդունուին ու դարմանուին անխտիր:

Երանի՛ Շուշեցիներուն, ե՛րբ պիտի ըսենք, երանի՛ Աղեքսանդրիացիներուն:

6	19	14
7	30	22
8	45	34
9	43	35
10	41	28

Համաճարակին սկիզբէն, այսինքն Յուլիս 15 էն մինչև Սեպտ. 9, ամբողջ Եգիպտոսի մէջ

Բռնուած են	17,558	Անձինք
Մեռած են	13,767	»
Բժշկուած են	1441	»
Դեռ կը մնան	2350	»

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

#### ՎԻՃԱԿԱՑՈՅՑ ՀԱՄԱՃԱՐԱԿԻՆ

Սեպտ. 1-10

ԸՆԴՀ. ԵԳԻՊՏՈՍ

Բռնուած	Մեռած	Բժշկուած
804	613	86
744	649	64
928	788	77
1051	807	93
1047	845	98
1313	1027	125
1242	1000	101
1436	1215	99
1639	1371	161

### ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

Սեպտ.	Բռնուած	Մեռած
1	6	5
2	4	2
3	8	9
4	9	8
5	18	11

### ՕՐՄԱՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԲԻՆ

#### ԷՔԱԾԱՐԱԿԱՆԸ

«ԷՕՐՕԲԷԷՆ» ին այս խորագրով յօդուածը կը վերջանար խորհրդածութեանց շարքով մը ուր Տիար Բ. Քիյեար, Ս. Պատրիարքին բռնելիք քաղաքական ուղղութիւնը դժելով, կը ջանար այդ համբաւաւոր հրատարականն արդիւնաւոր կացուցանել կարգ մը առկախ ու կենսական խնդիրներու նպատաւոր կարգադրութեամբը, որով միայն կարելի պիտի ըլլար բարձրացնել Օրմանեանի վարկն ու ազդեցիկ ընել Պատրիարքական իշխանութիւնը: Յարգելի յօդուածագիրը — որ հայկական դատին շուրջը մղուած միջազգային շարժման մէջ առաջին տեղը կը գրաւէ իրաւամբ — այդ հրատարականը վերջնական ու անդառնալի կը նկատէր: Սակայն, Երլտըզ Բէօշլիի Շուքը, որուն միակ մտահոգութիւնն եղած է ապահովել իր մարդակեր գոյութիւնը սուտ ու փուտ խոստումներով ու անվերջանալի ձգձգումներով, այս անգամ ալ խնդաց թիւն մեր Պա-

տրիարքին, խոստանալով անշարժ կարգադրել բոլոր ինդիւնները: Ուստի, Օրմանեանի հռչակաւոր հրաժարականը շուրջ ինկաւ:

Ու աւելի սիրուն ու այլազան ընծայելու համար կատակախաղը, Գուռը — ընկանաբար Երլտրզէն թելագրութեամբ — կ'առաջարկէ Օրմանեանին ստորագրել ու նաև Խառն Ժողովին ստորագրել տալ հաւատարմութեան ուխտագիր մը, Ն. Կ. առատագութ Վեհափառութեան մականին տակ կառավարուող Հայերուն անունովը:

Ու ստորագրուեցաւ Ուխտագիրը: Հիմայ ամեն բան կարգին է:


Համիտի գահակալութեան 27րդ տարեդարձին առթիւ, Օրմանեան իր փառաւոր վերամուտքը կրնէ Գում-Գաբուի Մայր-Եկեղեցին, շրջապատուած՝ մայրաքաղաքին բոլոր բարձրատիճան կղերական դասէն, աշխարհական երեւելիներէն ու Պատրիարքարանի պաշտօնեաներէն: Գոհարանական ազօթքի արարողութիւնը կը կատարուի հոն, ուրիշ տարիներու հանդէսներէն շատ աւելի մեծ շքեղութեամբ:

Աչքը լո՛յս ուրեմն Առաջնորդներուն, որոնց կառքը նորէն բազմեցաւ գահին վրայ. աչքը լո՛յս այն զառամ ու գագաշեալ հովիւներուն, որոնք, իրենց Պաշտպան Սուրբին — Օրմանեան Պատրիարքին — թեւերուն տակ խաղաղիկ կը բոլորեն իրենց վերջին օրերը...

Հոգ չէ թէ անդին, հարեմիքին խորերը. հրդեհեն գիւղերն ու կալերը, թալլեն գիւղացիները, լլկեն կոյսերը, առեանգեն այրիները. հոգ չէ՛ թէ հետզհետէ փակուին որբանոցները, մերկ, անօթի, փողոցները թափառին ազգին որբերը. հոգ չէ՛ թէ նահանգէ նահանգ, քաղքէ քաղաք, գիւղէ գիւղ ու տնէ տուն երթեկի արգելքը մնայ միշտ արգելք. հոգ չէ՛ թէ օրէ օր՛հայ բանտարկեալները հիւժին ու մեռնին

զնդաններուն խո՛րը:

Հոգ չէ, հոգ չէ՛ թէ բնաջնջումի գործը շարունակէ անդու. հերիք է որ Պատրիարքին կուրծքը ծածկուի ագամանդակուռ շքանշաններով ու պատրիարքարանին մեծ ու պզտիկ պաշտօնեաներն ալ նշան ու դրամապշտպեն այդ ընդհանուր պարգևաբաշխումէն:



### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ԷՍԹ ՈՒԷՍԹԻ

Քարից 3 Սեպտ. 1902

ԹՈՒՐՔ ԵՒ ՀԱՅ

Ներկայ թուականիս (Օգոստ.) 28-29 ի գիշերը գործակալութիւնս Կ. Պօլսէն հետեւեալ Լաֆոնիֆ հեռագիրն ստացաւ. «Սուրբանը կողմէ Հայերուն հետ հարաբերութիւնը,» ուրիշ ոչինչ, ե՛կ եթէ կրնաս այս խօսքերուն մէջէն ել բարեազգաբար երկրորդ առտուն աւելի ընդարձակ տեղեկութիւններ ստացանք, որոնք բացատրեցին հեռագրին միտքը: Մենք արդէն անցեալ թղթակցութեանց միոյն մէջ առաջ բերել էին հայ պատրիարքներու ինդիւրը, անոնց հրաժարականը. ահա այդ հրաժարականի համար է որ Սուլթանը կը զիջանի իբր թէ Հայերուն «մարդու պէս ապրելու իրաւունքը չնորհել, եւ ոչ թէ վայրի գազանի մը պէս միշտ հաշտեալ:

Սուլթանին այսպէս կակուղնալը շատ մը պատճառներ ունի. նախ Պատրիարքի հրաժարականը կայ, որը թէպէտ իրեն համար չնչին, բայց սակայն իր կարևորութիւնը ունի, որովհետեւ փատիշահը կը մտածէ թէ՛ եթէ իրօք այս Պատրիարքը հրաժարի, տեղը այնպիսի մէկը կրնայ անցնիլ սրուն հետ գլուխ ելլելն գուցէ շատ աւելի դժ-

ուար լինի: Ուրիշ կարգ մը դիւանագիտական խնդիրներ ալ կան. դեսպաններու կարգ մը դիմումները ի նըպաստ Հայերուն... և յետոյ՝ Մակեդոնա-Սլաւական խնդիրը որն եւս քան զեւս սպառնական գոյն մը կ'առնէ և որուն վրայ զանազան չարաբաստիկ լուրեր կը տարածուին այստեղ, պետութիւններու միջամտութիւնը աներկբայելի կը կարծուի...:

Սուլթանին քաղաքականութիւնն է այս. երբ երկու երեք խնդիրներ իրարու վրայ բարդուելով կը սկսին զինքը նեղել, շունչ քաշելու համար եւրոպական պետութեանց աչքին թոզ փչելու համար, բարենորոգումներ կը խոստանայ, ծրագիրներ պատրաստել կուտայ, մինչև որ խնդիրներէն մէկ երկուքը կարգադրէ, բայց թէ իւր խոստումը կը կատարէ՞, այդ ուրիշ բան է բոլորովին:

— Նոր ցրհնդեղ մը. — Լուրը եթէ Ամերիկայէն կամ Մուր աստեղաբանէն (Անգղիայէն) գար, չը պիտի գարմանայինք, բայց սա աւելի լուրջ տեղէ մը կը հասնի մեզ: Վիէննացի յայտնի օգերեւաբանը՝ Հանն, թուաբանական հաշիւներ ըրած է չոր, այսինքն անանձրև տարիներու և անձրեւալից տարիներու վրայ: Նա օգտուած է Փատուայի մէջ 1725էն ի վեր եւ Միլանի մէջ 1764 էն ի վեր եղած փորձերէն: Ամենաչոր տարիներն եղած են՝ 1753, 1788, 1823, 1859 և 1893 թուականները. իսկ անձրեւալից տարիներն են՝ 1738, 1773, 1803, 1843, 1878 թուականները:

Վերջապէս Վիէննացի օգերեւաբանին մարգարէութեանց համեմատ, ներկայ դարու ամենաչոր տարին գալու է 1928ին, իսկ 1913... սարսափեցէք, զարհուրեցէք, դողացէք, տեղի պիտի ունենայ նոր ջրհեղեղ մը !!!:

Օգերեւաբան Հանն է ըսողը:

— Աշխարհի բնակիչներուն ամենաերէցը. — Գործակալութեանս ստացած օտար հանդէսներէն մին որ ընդհանրապէս լու տեղեակ է այս կարգի բաներուն, կըսէ թէ այս միջոցիս աշխարհի ամենածեր մարդն է Պրիւնօ Գօթրին անուն անձը, որ հասարակաց ողորմութեամբ կ'ապրի Ռիօ տը Ժանէրօի մէջ, և հարիւր յիսուն և մէկ տարեկան է:

## ԱՂԻ ՄԵՐ ՅԱՐԳԵԼԻ

### ՊԱՇՏՕՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Est-Ouest գործակալութիւնս պատիւ ունի ծանուցանելու թէ իր Մաւուշի և Յայսարարութեանց (Publicité) բաժիններուն վրայ աւելցուցած է նաև Վաճառականական բաժին մ'ալ, որ կը զբաղի վաճառականութեան ամեն տեսակ խնդիրներով: Կարելի եղածին չափ արագ և աննշան միջնորդագնով մը կը կատարուին բոլոր մեզ յանձնուած գործերը: Յանձնարարութիւններ, արտածման և ներածման գործեր ամենայն փութով կը կատարուին գործակալութեանս Վաճառականական բաժնի միջոցով և շնորհիւ գործակալութեանս խիստ ընդարձակ յարաբերութիւններուն:

Ձեր կամ Ձեր թերթին միջոցով մեզ յանձնուած և կատարուած ամեն գործէ,

Գործակալութիւնս ձեզ կը յատկացնէ Օլօին 2 միջնորդագրի մը:

Տեսչութիւն Էսթ-Ուեսթի:

## ՔՐՈՆԻԿ

— ՀԱՅ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԷՆ ի նպաստ շքեղ ներկայացում մը պիտի տրուի այս գիշեր ժամը 9ին քաղաքիս Ալ-

համարա պարտեզը: Կ'իմանանք թէ բու-  
լոր տոմսերը գրեթէ ուպառած են: 5  
ըրչնոցները կ'իշխեն պիտի ծախուին:

— ԳԱԼՍՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ կը լը-  
սենք թէ պիտի վերաբացուի ամսոյս  
15 ին երկուշաբթի օրը: Կ'իմանանք  
նաև թէ նոր հոգաբարձութիւն մը  
կարգուած է: Համաճարակի օրերու  
մէջ առ ի՛նչ փութկոտութիւն, Տարսպ  
Կ'իմանաի պէս ալտոտ թաղի մը մէջ  
խոհեմութիւն է այսքան շուտ բանալ  
վարժարանը:

— ՀԱՅ ՀԱՆԴԷՍ. — Արդի գրակա-  
նութեան երկու ծանօթ դէմքեր Տեարք  
Արփիար Արփիարեան ու Լևոն Բաչա-  
լբեան, ամիս մը կայ, հիմնած են Վե-  
նետիկի մէջ քաղաքական ու գրական  
կիսամսեայ հանդէս մը: Հայ Հանդէսը-  
Տարեկան բաժանորդագիրն է 10 ֆրկ.  
հասցէն Hai Hantesse, Cassetta postale 341  
Venise.

Օգտակար ուղղութեամբ յարա-  
տեութիւն կը մաղթենք:

— ՏԻԱՐ Ա. ԼԱԼԱԵԱՆՑ մեկ *sur*ե-  
կան Փիլոսոփի նուիրեց Գահիրէի Լսա-  
րան-Ընթերցատան: Այս հաստատու-  
թեան վրայ պիտի խօսինք յառաջիկա-  
յին:

— ԱԶԱՏ ԽՕՄԲ պարբերականը պի-  
տի նորէն լոյս տեսնէ ամսուս մէջ,  
«Արաքս» տպարանէն, խմբագրութեամբ  
հասակերի գրագէտ ՏԻԱՐ ԵՐՈՒԱՆԴ  
ՕՏԵԱՆի:

Մեր անկեղծ խնդակցութիւնները:

Վիէննայի Մխիթարեանց Աբբա-  
հօր, Գեր. Հ. Արսէն Այտրնեանի մահ-  
ուան տութիւ «Փիւնիկ» իր անկեղծ ցա-  
ւակցութիւնները կը յայտնէ Պատկ.  
Մխիթարեան Միաբանութեան, որուն  
ամբողջ հայութիւնը կը ձայնակցի ող-  
բալու համար մեծ կորուստը յանձին  
Գեր. Ողբացեալին, զոր կը դաւանինք  
ո՛չ միայն Աշխարհաբարին Հայրը, այլ

և յարգելի գիւտուն մը, լեզուագէտ ու  
բանասէր. գեղարուեստագէտ մը, ե-  
րաժիշտ ու գեղեցկագիր: Բերա ծնած  
1825 Յունվարի 19ին, միաբան արձա-  
նագրուած 1842 Մայիսի 15ին, 20 տա-  
րեկանին ձեռնագրուած էր վարդա-  
պետ:

Ողբացեալ Աբբահօր տաղանդին ու  
գործին վրայ աւելի մանրամասնու-  
թեանց տեղեկանալ փափագողներու  
յանձնարարելով «Հանդէս Աւստրիայի  
Վիեննայի և Անալիսի» վերջին թի-  
ւերը, կը մաղթենք որ Վիէննայի Պատկ.  
Մխիթարեանք ազգին պարգևեն նոր  
Այտրնեան մը:

### ԱՂԲԱՏԻՆ ՊԱՏԻԻԸ

Կ Ա Մ

#### ՆԱԽԱԽՆՍՄՈՒԹԵԱՆ ՄՍՏԸ

Սոյն շահագրգիռ հեղինակու-  
թեանս ահա՛ Գ. հատորն ալ հրատա-  
րակ ելաւ, որ յառաջիկայ շաբթու-  
Աղեքս. Ազն. բաժանորդացս պիտի  
ցրուեմ. իսկ Գ. հատորը մամուլի  
տակ է:

Բաժանորդներս չը յուսացին թէ  
600 երեսէ բաղկացեալ 16 պատկերով  
ասանկ գործ մը գլուխ կը հանեմ, մա-  
նաւանդ տեսնալով որ դրամական վի-  
ճակս անձուկ է. արդարև իրաւունք  
ունէին, որովհետև շատերը շատ բան  
խոստացած, դրամները ժողոված ան-  
յայտացած ու ժողովուրդին վստահու-  
թիւնը շարաշար գործածած էին:

Բայց ես հրատարակաւ պատուոյ  
խօսք տուած էի որ պիտի ամբողջա-  
ցընեմ ու խօսքիս տէրն եմ. թէ և  
այս գործը գլուխ հանելու համար  
ի՛նչ նեղութիւն, տառապանք կրելս  
միայն Ապտուսի գիտնայ. գէթ վերջը  
արդիւնք մը՝ ան ալ չը կայ. արդէն

մեր հայ գրագետներուն ճակատագիրն է. եթէ պանիր հացով գոհ կ'ըլլաս, գրեչեզ ծայրովը երկիր հերկէ՛:

Ուստի ես ալ կուգամ վստահաբար ազգարարել թէ՛ մինչև հոկտ. 1 ով որ կուզէ 20 զրուշով հեղինակութենէս ունենալ, պարտի բաժանորդագրուիլ, դրամը վճարելով, իսկ յետ աւարտման 7 ֆրանցի պիտի գնեն եթէ գտնուի. արդէն մեծ մասը Պօլիս, Արտասահման ղրկուած է:

2 Սեպտ. 1902 ԱՐՇԱԿ ԱԼՔՈՒՆԵՍՆ

### ԳՈՂ ՄԺԿՈ

Գաւառական կեանքին

Գրեց ՆՇԻԿ ԵՐԷՅ

Ընդ մաւշով է այս վէպը, որ մօտերս պիտի լոյս տեսնէ Արաքս տպարանէն:

Բաժանորդագրուիլ փափագողները 5 զրշ.ի նամակադրոշմ կրնան ղրկել Փիւնիկի հասցէին:



Երիտասարդ մը, որ քաջ Անգլիագէտ է, պատրաստ է մասնաւոր դասեր տալ անգլերէնի, տուներու մէջ ալ, խիստ գոհացուցիչ եւ դիւրամտչելի պայմաններով:

Փափագողները դիմեն Փիւնիկի խմբագրութեան:

### «ԱՐԱՔՍ»

Հայկական տպարանը թէ՛ հայերէն, թէ՛ գաղղիերէն և թէ՛ ուրիշ լեզուներով ամեն տեսակ տպագրական գործեր կը կատարէ մեծ խնամով եւ, ինչ որ նուազ կարեւոր չէ, խիՍՏ ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ:

## SALAMANDER

### ՍԱԼԱՄԱՆՏԸՐ

Ապահովագրական Ընկերութիւն ղնդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Գրամագլուխ 3,125,000 ֆրանգ

Ամեն կերպ Ապահովագրութիւնը կ'ընդունուին ղնդդէմ հրդեհի ինչպէս նաև Ծովային, Դետային և Յամաքային փոխադրութեանց արկածներու դէմ:

Դիւրամտչելի գներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակաջ եւ Լիազօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱԵԱՆ

Աղեփսանդրիա, պզտիկ Մեկնիէ Ապուստրսա փողոց թիւ 10

## L'ALLIANCE

### Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Գրամագլուխ 5,000,000 ֆրանգ